Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-929-30.09.2024-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սևանա լճի մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-190 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի «դ» կետը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ1» կետով՝

«գ1) յուրաքանչյուր տարի սահմանում է Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակները և ժամկետները, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններն ու պահանջները.»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի «բ» կետը:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1.-ին հոդվածով.

«Հոդված 28.1. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը

1.Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և գործիքակազմով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Կ-929-30.09.2024-ՏՏԳԾ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սևանա լճի մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-190 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի «դ» կետը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ1» կետով՝

«գ1) յուրաքանչյուր տարի սահմանում է Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակները և ժամկետները, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններն ու պահանջները.»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի «բ» կետը:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1.-ին հոդվածով.

«Հոդված 28.1. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը

1.Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և գործիքակազմով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-929-30.09.2024-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**4-րդ հոդված**	4-րդ հոդվածով լրացվող նոր 28.1-ին հոդվածի վերնագրում «28.1» թիվն առաջարկում ենք փոխարի-նել «28.1.» թվով, ինչպես նաև նշված հոդվածի «Սևանա լճի» բառերից առաջ լրացնել «1.» թիվը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հովածի 3-րդ մասը, համաձայն որի՝ Օրենսդրական ակտերում հոդվածները	Ընդունվել է	Ընդունվել է

			բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:		